

Մրցութային հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր (ԵԳՖԱՄ)

Դրամաշնորհ թիվ 2000001401

Պայմանագիր՝ Ստարտափ փաթեթներ Պատուհան 1-ի նախապես ընտրված շահառուների համար /Երկրորդ փուլ/
Հղում թիվ GEF/ICB-2021/001

1. **Հայաստանի Հանրապետությունը** ֆինանսավորում է ստացել «Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից» (ԳԷՀ) ԵԳՖԱՄ ծրագրի ծախսերը հոգալու համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել հետևյալ պայմանագրերի շրջանակում վճարումներ իրականացնելու նպատակով՝

Լոտ 1 - GEF/ICB-2021/001-1՝ Պտղատու ծառերի տնկիներ,

Լոտ 2 - GEF/ICB-2021/001՝ Թունելային տիպի ջերմոցներ,

Լոտ 3 - GEF/ICB-2021/001-3՝ Սրսկիչներ, խոտհնձիչներ, մոտոբլոկներ,

Լոտ 4 - GEF/ICB-2021/001-4՝ Մրգի էլեկտրական չորանոցներ,

Լոտ 5 - GEF/ICB-2021/001-5՝ Մրգի Քամու չորանոցներ,

Լոտ 6 - GEF/ICB-2021/001-6՝ Մեղվաընտանիքներով փեթակներ:

2. «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը պահանջներին համապատասխանող հայտատուներին հրավիրում է ներկայացնել մրցութային կնքված հայտեր հետևյալ պայմանագրերի համար՝ **Պտղատու ծառերի տնկիներ, Թունելային տիպի ջերմոցներ՝ 100 քմ, Սրսկիչներ, խոտհնձիչներ, մոտոբլոկներ՝ 2 կցորդիչով (գուրան և խոտհնձիչ), Մրգի էլեկտրական չորանոցներ, Մրգի քամու չորանոցներ, Մեղվաընտանիքներով փեթակներ:**

3. Հայտատուները կարող են մրցութային հայտ ներկայացնել մեկ կամ մի քանի պայմանագրերի համար, ինչպես լրացուցիչ կերպով սահմանված է մրցութային փաթեթում:

4. Մրցույթը կանցկացվի՝ ԳԶՄՀ-ի 2010 թ. Գնումների ուղեցույցով և 2010 թ. Գնումների ձեռնարկով սահմանված Միջազգային մրցութային սակարկությունների ընթացակարգերի համաձայն և բաց կլինի Մրցութային փաթեթում սահմանված պահանջներին համապատասխանող բոլոր հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերին, որոնք սահմանում են ԳԶՄՀ-ի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

5. Պահանջներին համապատասխանող հետաքրքրված հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ **«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի Գնումների բաժնի ղեկավար Արթուր Գրիգորյանից՝ procurement@raed.am** հասցեով, և մրցութային փաթեթին ծանոթանալ աշխատանքային ժամերին՝ 9:00-17:00-ը, ստորև նշված հասցեում:

6. Մրցութային փաստաթղթերի հայերեն ամբողջական փաթեթը պահանջներին համապատասխանող հետաքրքրված հայտատուները կարող են ձեռք բերել՝ ստորև նշված հասցեով ներկայացնելով գրավոր դիմում և վճարելով **10,000 ՀՀ դրամ**, որը վերադարձի ենթակա չէ: Վճարումը պետք է կատարվի նշված հաշվեհամարին ուղղակի փոխանցման միջոցով: Փաստաթղթերը կուղարկվեն էլեկտրոնային փոստով:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2021 թ. դեկտեմբերի 03-ին՝ ժամը 15:00-ին**, կամ մինչ այդ: Մրցութային հայտերի ներկայացումն էլեկտրոնային եղանակով չի թույլատրվում: Ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվի: Հայտերը հրապարակայնորեն կբացվեն հայտատուների լիազորված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվել ցանկացողների ներկայությամբ ներքոնշյալ հասցեով **2021 թ. դեկտեմբերի 03-ին՝ ժամը 15:00-ին**:

8. Հայտին կից պետք է ներկայացվի Հայտի երաշխիք՝ հետևյալ գումարով.

Լոտ 1 - GEF/ICB-2021/001-1՝ Պտղատու ծառերի տնկիներ. 250 ԱՄՆ դոլար,

Լոտ 2 - GEF/ICB-2021/001-2՝ Թունելային տիպի ջերմոցներ. 1,735 ԱՄՆ դոլար,

Լոտ 3 - GEF/ICB-2021/001-3՝ Սրսկիչներ, խոտհնձիչներ, մոտոբլոկներ. 2,030 ԱՄՆ դոլար,

Լոտ 4 - GEF/ICB-2021/001-4՝ Մրգի էլեկտրական չորանոցներ. 1,660 ԱՄՆ դոլար,

Լոտ 5 - GEF/ICB-2021/001-5՝ Մրգի Քամու չորանոցներ. 2,760 ԱՄՆ դոլար,

Լոտ 6 - GEF/ICB-2021/001-6՝ Մեղվարնտանիքներով փեթակներ. 4,235 ԱՄՆ դոլար:

9. Վերևում հիշատակվող հասցեն է.

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան

Հասցե՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծ 4, 6-րդ հարկ, սենյակ 14; Հեռ.՝ 37410 54 65 10 138

Էլփոստ՝ procurement@raed.am; Կայք՝ www.raed.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ, հ/հ 15700-11483010200